

Դուրյանի տաղերը և այլն (1,500,000 քարտի սահմաններում): Միաժամանակ կատարվել է մի շարք հեղինակների երկերի համաբարբառների բարերի ընտրություն, ընտրովի բառեր են քաղվել տարբեր հեղինակների ստեղծագործություններից, թերթներից, ամսագրերից և այլն:

Քայց այս աշխատանքը դեռևս սկիզբն է այն մեծ գործի, որ կեզվի ինստիտուտը քարտագրական սեկտորի միջոցով իրականացնելու է մինչև առաջիկա յոթնամյակի վերջը, երբ համաբարբառի վերածված կլինեն հայ գրողների շատ երկեր: Դա լինելու է մեր նոր գրական երկու լեզուների ներկայացուցիչների բառագանձը, որ դրսևորելու է մեր լեզվի քարտագրման նոր փուլի բառապաշարի հարստությունը: Փարտաբանը պետք է արտահայտի

նաև հայոց լեզվի քարտագրման հին ու միջին շրջանների բառագանձը: Նախատեսվում է միջոցներ ձեռք առնել առաջիկա յոթնամյակի ընթացքում ստանալու Վիեննայի Միաբարբառների գրաքարի մեծ քարտաբանի լուսանկարները և նորայր Բյուզանդացու կազմած միջին հայերենի համաբարբառը, որոնք է՛լ ավելի լրիվ ու ամբողջական կդարձնեն մեր բազմադարյան ու հարուստ լեզվի այդ գանձաբանը, որը հիմնադրվել է մեր մայրաքաղաքում, Մատենադարանի կողմից և Մատենադարանի հետ դառնալու է հայագիտության արդյունաշատ և մշտական օջախներից մեկը:

Ա. ՄՈՒՐԱՎԻՅԱՆ

Վ. ԱՌԱՔԵՆՅԱՆ

ԱԿԱԳԵՄԻԱՅԻ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՎԵՍՏԻ ԹԱՆԳԱՐԱՆԸ

Հայկական ՍՍԻ Գիտությունների Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանը ծնունդ է առել Հայաստանում սովետական կարգերի հաստատման առաջին տարիներին: Նրա Գրական բաժինը (որոշ ֆոնդեր նաև արվեստի բաժնից), մասն է կազմել 1922 թվականին Երևանում հիմնված Կուլտուր-պատմական թանգարանի, որն ունեցել է մի քանի բաժանմունք՝ Կերպարվեստի, Պատմական, Գրական, Լեզվագրական:

Գրական բաժնի ստեղծման և հարստացման գործում խոշոր երախտիք ունի բանասեր Ե. Շահազիզը: Նրա ջանքերով է, որ Ն. Նախիջևանից Երևան են փոխադրվել արժեքավոր և հարուստ մի շարք ֆոնդեր, ինչպես ռուսացիոն դեմոկրատ Մ. Նալբանդյանի, Ռաֆայել Պատկանյանի, Սմբատ Շահազիզի արխիվները, նոր Նախիջևանի մագիստրատի 2000-ից ավելի փաստաթղթեր պարունակող դիվանը և այլն: Թիֆլիսից, Մոսկվայից և Կովկասի այլ քաղաքներից Երևան են փոխադրվել նաև ուրիշ արխիվներ: Դրանցով գրվել է ներկա Գրական թանգարանի հիմքը, որը հիտադայում գնալով հարստացել է և մեծացել:

Թանգարանի գրական բաժնում պահպանվում են գերազանցապես 19—20-րդ դարերի հայ գրողների, հրապարակախոսների և մշակութային այլ գործիչների ավելի քան երկու հարյուր արխիվային ֆոնդեր, որոնք պարունակում են հայ կրասիկ գրականության մի

շարք արժեքավոր նմուշների ինքնագրերը, անտիպ ստեղծագործություններ, պատմական զանազան վավերագրեր, լուսանկարներ, դրերներ, անձնական գործածության իրեր, գեղարվեստական նկարներ, քանդակներ և այլն:

Ժամանակի ամենակուլ ժանրից ազատվելով, մեզ են հասել հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչներից մի քանիսի ձեռագրերը, որոնց թվում հիշատակության արժանի է Սայաթ-Նովայի համբավավոր «Գաֆտարը»:

Հայ նոր գրականության հիմնադիր Խ. Աբովյանի արխիվը թե՛ իր ծավալով և թե՛ մանավանդ պարունակած նյութերի հասարակական արժեքով ու նշանակությամբ ամենահարուստներից մեկն է: Այն պարունակում է 783 միավոր, այդ թվում անմահ «Վերք Հայաստանի» վեպի սևագիր և մաքրագիր օրինակները, «Աղասու խաղի», Աբովյանի դորպատյան օրագրերի, մի շարք բանաստեղծությունների և արձակ երկերի ինքնագրերը, բազմաթիվ նամակներ, պաշտոնական գրություններ, նկարներ և այլն: Հարուստ է նաև ռուսացիոն դեմոկրատ Միքայել Նալբանդյանի ֆոնդը. այստեղ հավաքված է 668 փաստաթուղթ, որոնց մեջ են Նալբանդյանի չափածո և արձակ մի շարք գործերի, այդ թվում, «Յաղագս հայկական մատենագրության» երկի բնագրերը: Նալբանդյանի արխիվում են պահվում բանտից գրած նրա հայերեն և ռուսերեն արժեքավոր նա-

մակաների րնագրերը. «Կրիտիկա Սոս և Վարդիթեր» քննադատական նշանավոր երկի և սենսատական ցուցմունքների լուսանկար օրինակները, որոնք թանգարանին են հանձնվել նախնադանագետ Աշոտ Հովհաննիսյանի կողմից: Այս ֆոնդում պահպանվում են նախնադանի անձնական գործածության որոշ իրեր՝ նրա շապիկը, ատրճանակը, խոշորացույց դիտակը՝ իր հարմարանքներով, սեփական կնիք-գրոշմը և այլն:

Նախնադանի արխիվի նշանակալից մասն է կազմում նրա անձնական գրադարանը, բաղկացած 254 կտոր գրքից: Դրանք թե՛ լեզունների բազմազանությամբ (հայերեն, ռուսերեն, գերմաներեն, ֆրանսերեն, անգլերեն) և թե՛ իրենց ընդգրկած բնագավառների շատությամբ (բժշկություն, ֆիզիկա, քիմիա, աստղաբաշխություն, զրականություն, լեզու, պատմություն և այլն), վկայում են նախնադանի հետաքրքրության լայն շրջանակներն ու մտավոր գաղափարային բարձր աստիճանը:

Թանգարանի նշանակալից ֆոնդերից է Ռափայել Պատկանյանի արխիվը, որը հեղինակի շափածո և արձակ ստեղծագործությունների քաղերից, օրագրերից բացի՝ պարունակում է Պատկանյանի գրած և ստացած բազմաթիվ նամակներն ու նրա անձնական գրադարանը:

Նույնչափ արժեքավոր են՝ Հովհաննես Թումանյանի, Ղազարոս Աղայանի, Նար-Դոսի, Ալ. Մատուրյանի, Սմբատ Շահազիզի, Երվանդազեի, Պր. Պոռչյանի, Վահան Տերյանի, Գարրել Սունդուկյանի և շատ ուրիշների արխիվները:

Իրենց ծավալով և հասարակական արժեքով ուշագրավ են Գյուտ Աղանյանի, Մկրտիչ Բարխուդարյանի, Գրիգոր Արծրունու, Համբարձում Առաքելյանի, Մինաս Բերբերյանի, Մկրտիչ Էմինի, Ավետիք Արասխանյանի, Գր. Խալաթյանի, Կ. Կոստանյանի, Բագրատ Նավասարդյանի, Երվանդ Շահազիզի, Սարգիս Փամպլյանի, ինչպես նաև Կովկասի Հայոց Հրատարակչական ընկերության և շատ ուրիշ արխիվները: Հիշված ֆոնդերում կան այնպիսի վավերագրեր, որոնք կարող են հետաքրքրել ոչ միայն հայ մշակույթի հարցերով, այլև ուրիշ ժողովուրդների պատմության մեջ կամ գրականության մեջ զբաղվողներին: Այդ կարգի նյութերից են՝ ականավոր հայագետ Մկրտիչ Էմինի ֆոնդը, ուր տարբեր լեզուներով գրված 1200 փաստաթուղթ կա, որոնց մեջ մեծ թիվ են կազմում ռուսերեն, ֆրանսերեն և ուրիշ լեզուներով գրված նամակներն ու այլ կարգի գրությունները: Մեծ հետաքրքրություն են ներկայացնում հայագետներ Վիկտոր Լանգուայի, Ֆելիքս Նելի, Էդուարդ Դյուլոբեի, Եվարիստ Պրուտտի, Բրոսսեի և ուրիշների, ինչպես և բազ-

մաթիվ ռուս ականավոր գործիչների նամակները՝ ուղղված Էմինին: Այդ նամակները պարունակում են հետաքրքրական տեղեկություններ՝ հայ հին գրականության կարևոր երկերի թարգմանության, Եվրոպայում գրանք տարածելու, գրանց մասին գրված գրախոսությունների և այլ հարցերի մասին:

Նույնպիսի արժեքավոր ֆոնդ է հայտնի անգլիացի ճանապարհորդ Լինչի արխիվը, որտեղ գտնվում են հեղինակի «Արմենիա» սովորածավալ երկհատոր աշխատության ձեռագիր օրինակները, այդ աշխատության պատրաստման համար հավաքված բազմաթիվ փաստաթղթեր՝ նամակներ, նկարներ և այլն: Այստեղ են Լինչի կողմից՝ իր ժամանակի օտար և հայ բազմաթիվ հայտնի մարդկանց, այդ թվում Արշակ Չոպանյանին, Արգար Հովհաննիսյանին, Մկրտիչ Խրիմյանին և ուրիշներին գրած նամակների պատճենները: Կարևոր են հատկապես Լինչի օրագրերը, որոնք նա գրի է առել օր օրին՝ Հայաստանում կատարած իր երկարատև ուղևորությունների և հետազոտության ընթացքում, և որոնց մի մասն է միայն օգտագործված «Արմենիա» աշխատության մեջ:

Գրականության և արվեստի թանգարանի թատերա-երաժշտական բաժնի արխիվային նյութերի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում հայ հանճարեղ դերասան Պետրոս Աղամյանի ֆոնդը: Չնայած այն բանին, որ Պետրոս Աղամյանը ունեցել է թափառական կյանք, շրջել է երկրից երկիր և անձնական իրերից, ձեռագրերից ու գրքերից շատերը տարել է իր հետ տարբեր քաղաքներ, իսկ հետագայում իր ծննդավայրը, այնուամենայնիվ Աղամյանից մեղ հասել է 1644 արխիվային միավոր, որոնց թվում՝ տարբեր մարդկանց գրած նրա մոտ երկու հարյուր նամակների ձեռագրերը, մանավորապես իր մտերիմ բարեկամներից մեկին՝ Ալեքսանդր Ստեփանյանին, նորնախնդանաբնակ հասարակական գործիչ Երանուհի Շահբազյանին, Գ. Չմշկյանին, Ար. Արծրունուն, նկարիչ Գ. Բաշինջաղյանին, Ղ. Աղայանին և այլ բազմաթիվ մարդկանց գրած նամակները:

Աղամյանի ֆոնդի կարևոր մասն են կազմում հանճարեղ դերասանի վրձինի արդյունք հանդիսացող չուղաներկ կտավները: Աղամյանը մտերիմ կապեր է ունեցել իր ժամանակի նշանավոր արվեստագետների հետ, որոնց թված հիշատակներից թանգարանում պահվում են Սալվինիի և Բոսարտի նկարներն իրենց սեփական ստորագրությամբ նվիրված Պ. Աղամյանին, ռուս ականավոր արվեստագետներ Մ. Գ. Սավինայի, Վ. Դավիդովի և Ա. Պ. Լենսկու ջերմ մականություններով նկարները, աշխարհահռչակ ժողանկարիչ Ալվազովսկու նվերը

Աղամյանին սեփական մակագրությամբ և այլն: Բացառիկ մեծ արժեք է ներկայացնում Օդեսայի թատերասեր հասարակության կողմից Պետրոս Աղամյանին մատուցված Յավչակագմ ուղերձը, որով 1887 թ. դեկտեմբերի 5-ին Օդեսայի թատերասեր հասարակությունը հայանում է իր խորին շնորհակալությունը Աթեմիական այն մեծ հաճույքի համար, որ պատճառել է Աղամյանին:

Հիշատակության արժանի են ույն զգեստները, որոնք Աղամյանը կրում էր իր հիմնական զեկերը (Օթկլո, Համլետ, Լիր արքա և Քին) կատարելիս, այն փոքրիկ դաշույնը, որով խաղում էր «Համլետ»-ի դերում հասկապես հայտնի «Լինկոլն շիֆինկ» մենախոսության տեսարանում, Աղամյանի բեմական կոշիկները: Նվիրված իրերից կարևոր են Աղամյանին մատուցված փողոսկրյա սրանչևի զավագանը, սաղափյա բազմաթիվ, արժանի մի գափնեպան, մի գորգ, որի վրա 1881 թ. Քիֆլիսի հայ կանայք ու աղջիկները ստեղծագործել են Աղամյանի հիմնական բոլոր դերերի անունները և այլն:

Ամիրան Մանգիլյանի ֆոնդը հարուստ է արևելահայ պրոֆեսիոնալ թատրոնի սկզբնավորումներ վերաբերող նյութերով (նամակներ, ծրագրեր, նկարներ և այլն): Բացառիկ արժեք են ներկայացնում Քիֆլիսի թատրոնի ծաղկման շրջանի 1879—82 թթ. վերաբերող աֆիշների և ծրագրերի հավաքածուները, որոնք խնամքով պահպանվել են Մանգիլյանի կողմից:

Թատերական բաժնի աշխի բնկնող արխիվներից են Օվի Սևուսյանի, Գ. Տեր-Դավթյանի, սովետահայ արտիստներից Գրիգոր Ավետյանի, Հասմիկ Հակոբյանի, Բաճակ Ալիխանյանի, Արուս Ոսկանյանի, Օլգա Մայսուրյանի, Մերայել Մանվելյանի և ուրիշների արխիվները, որոնք պարունակում են հազարավոր փաստաթղթեր (նամակներ, լուսանկարներ, աֆիշներ, ծրագրեր, անձնական իրեր և այլն):

Թանգարանի երաժշտական բաժնի նյութերից հիշատակության արժանի են Կոմիտասի և Ալ. Սպենդիարյանի արխիվները: Կոմիտասի արխիվում պահպանվում են սկանավոր կոմպոզիտորի բազմաթիվ ինքնագիր երկերը, հայ ժողովրդական երգերի գրառումներ, մշակումներ, տեսական աշխատություններ, հուշեր Կոմիտասի մասին, նամակներ և այլն:

Անշրաժեշտ է նշել, որ Կոմիտասի արխիվի հարստացմանը մեծապես նպաստում է կոմպոզիտորի աշակերտուհի օրիորդ Մարգարիտ Բաբայանը, որը գտնվում է Փարիզում և սերտ կապ է պահպանում մեր ազգային հեռու, պարբերաբար նյութեր է ուղարկում թանգարանին: 1955 թվականին Մարգարիտ Բաբա-

յանն ուղարկեց Կոմիտասի շատ արժեքավոր ձեռագրերից մի քանիսը, այդ թվում նաև վաճառի նրա «Անուշ» օպերայից, առանձին ժողովրդական երգեր և այլն: 1957 թվականին նա ուղարկեց Կոմիտասից ստացած իր նամակների պատճենները:

Կոմիտասի վերաբերյալ արժեքավոր մի շարք նյութեր ստացվել են Էջմիածնի կաթողիկոսարանի միջոցով:

Իր ծավալով և հասարակական արժեքով այս բաժնի խոշորագույն արխիվներից է Ալեք. Եանդր Սպենդիարյանի ֆոնդը, որը պարունակում է մոտավորապես 2500 փաստաթուղթ, այդ թվում նրա օպերաների պարտիտուրաները, կլավիրները, սիմֆոնիկ և գործիքային ստեղծագործությունները, վոկալ ստեղծագործությունները (խմբերգեր, սոմաններ և այլն), ինչպես և ժողովրդական երգերի գրառումներ, հուշեր Սպենդիարյանի մասին, նմուշներ կոմպոզիտորի անձնական իրերից, գրքեր և այլն: Սպենդիարյանի ֆոնդի արժեքավոր նյութերից են մոտ հազարի հասնող այն նամակները, որոնք նա գրել կամ ստացել է գերագանցապես նշանավոր ռուս կոմպոզիտորներից:

Հիշատակության արժանի է պահանավոր երգչուհի Նադեժդա Պապայանի արխիվը, որտեղ պահված են բազմաթիվ նմուշներ երգչուհու տված համերգների ծրագրերից ու աֆիշներից, լուսանկարներ, անձնական գործածության որոշ իրեր, հիշողություններ և գրախոսականներ երգչուհու մասին:

Համեմատաբար աղքատ է տաղանդավոր կոմպոզիտոր Տիգրան Չուհաջյանի արխիվը:

Միայն վերջին տարիների ընթացքում է, որ այն սկսել է համարվել արտասահմանից ստացած որոշ նյութերով:

Մեր թվարկած ֆոնդերը թանգարանը ձեռք է բերել գերագանցապես մինչև 1950-ական թվականների սկզբները՝ հետագայում նրանք ենթարկվել են մասնակի հավելումների ու լրացումների:

Վերջին տարիների ընթացքում գրական բաժնի արխիվային միավորների թիվը գրեթե կրկնապատկվեց: Ստեղծվեց Եղիշև Չարենցի ֆոնդը: Մինչ այդ թանգարանում խնամքով պահպանվում էին բանաստեղծի ստեղծագործությունների ձեռագրերից առանձին նմուշներ, մարազիքի և սեպիքի մի շարք բանաստեղծություններ (մեծ մասամբ անտպյալ) և Չարենցի անձնական գրադարանի մի մասը:

1955 և 1956 թվականներին Երևանից, Քրիլիսից, Մոսկվայից և այլ վայրերից ձեռք բերվեցին Չարենցի բազմաթիվ ձեռագրերը, նամակները, լուսանկարները, մակագրված գրքերը և այլն: Բանաստեղծի դուստր Արմենիկ

Չարենցից ստացվեց «Կոմիտաս» պոեմի բնագիրը և բանաստեղծի մի պահարանը, Եղիշե Հովհաննիսյանից՝ Չարենցի մի շարք բանաստեղծությունների ինքնագրերը:

Մոսկվայից ստացվեց բանաստեղծուհի Լեյլու շրեդ ալրոմբ, որը պարունակում է բանաստեղծի տպագիր և անտիպ մի շարք երկերը: Երևանից, Գր. Ազադյանից ստացվեցին բանաստեղծի կողմից նրան ուղարկված մի քանի շատ արժեքավոր նամակներ և չեղած մակագրություններով նվիրված գրքեր: Չարենցի մակագրություններով տարբեր մարդկանց նվեր տրված գրքեր (ինչպես Մ. Գևորգյանին), գերազանցապես բանաստեղծի երկերի առաջին հրատարակությունները: Այսպիսով՝ այժմ մենք ունենք Եղիշե Չարենցի բավականաչափ հարուստ ֆոնդը, որի հիման վրա հնարավոր դարձավ կազմակերպել բանաստեղծի 60-ամյակին նվիրված ցուցահանդեսը:

Թանգարանը 1957 թվականին ձեռք բերեց արվեստագետ, «Գեղարվեստ» հանգեսի երկարամյա խմբագիր Գ. Լեոնյանի հարուստ արխիվը, որը պարունակում է մոտ 4000 միավոր, խիստ հարուստ «Գեղարվեստ»-ի խմբագրության անտիպ նյութերից, նամակներ, լուսանկարներ, Լեոնյանի գրչին պատկանող ստեղծագործություններ և այլն:

Լեոնյանի ֆոնդի նկատելի մասն է կազմում արվեստագետի հոր՝ ակադեմիկոս աշուղ Ջիվանու անձնական արխիվը, որտեղ գտնվում են մի շարք աշուղական ստեղծագործություններ, տպագիր և անտիպ երգարաններ և այլն:

Վերջին տարիների ընթացքում թանգարանի գրական բաժինը հարստացել է նաև այլ նյութերով, որոնցից հիշատակենք գյուղագիր Ն. Մամիկոնյանի, սովետահայ քննադատ Յ. Խանգադյանի, մանկավարժ Շահան Սիմոնի, մանկական գրող Աթաբեկ Խնկոյանի, սովետահայ արձակագիր Լյուսի Թարգվուրի, ակադեմիկոս Արսեն Տերտրյանի, գրող Զապել Նսալյանի և այլ անձանց արխիվները:

Թանգարանը հավաքել է նաև տարբեր մարդկանց հիշողությունները: Ձեռք են բերվել Լեոնյանից Բաբանա Աթանեսյանի, հասարակական գործիչ Սոֆիա Դանիել-Բեկի, դաշնակահարուհի Ազադնի Մեսրոպյանի, հրատարակիչ Վաղինակ Բյուրատի և այլոց հուշերը, որոնք պարունակում են արժեքավոր տեղեկություններ մոտավոր անցյալի հալ մշակույթի գործիչների մասին:

1957 թվականին թանգարանը ստացավ սովետահայ ակադեմիկոս արձակագիր Դերենիկ Դեմիրճյանի մեծ արխիվը, որտեղ ամփոփված են գրողի հայտնի շատ երկերի, այդ թվում

«Վարդանանք» պատմավեպի սևագրություններն ու մաքրագիր օրինակները, մի շարք պատմվածքների, ակնարկների բնագրերը, նրա բոլոր պիեսների («Կապուտան» «Երկիր հայրենի», «Քաջ Նազար», «Յոսֆորային շող», «Կատաստան», «Մաման գնում է Մոսկվա») ձեռագրերը, զանազան լիբրետոներ, լեզվի, դրականության և այլ հարցերի մասին գրառումներ, առանձին հոդվածների ու ֆելիետոնների բնագրերը և այլն: Դեմիրճյանի արխիվում հայտնաբերվեց նրա մի նոր ծավալուն վեպի ձեռագիրը «Քաղաք» վերնագրով, որից միայն աննշան հատվածներ են լույս տեսել մամուլում: Երրորդություն պետք է համարել ուսուցիչական առաջ գրված և մինչև այժմ անտիպ մնացած մի պիես «Ազգային խաչատուկություն» վերնագրով:

Վահրամ Փափազյանի արխիվը, որն ստացվեց 1955 թվականին, պարունակում է արտիստի հիսնամյա բեմական գործունեությունը ներկայացնող բազմաթիվ նյութեր, ընդհանուր ծավալով մոտ 3000 միավոր: Կազմված և խնամվող պատմությունների մի քանի պատմությունում զետեղված են արտիստի մասին գրված գրախոսականներ՝ սկսած նրա բեմական առաջին քայլերից (1908) մինչև մեր օրերը: Այնտեղ կան Փափազյանի որոշ ստեղծագործությունների բնագրերը, այդ թվում թուրքական թատրոնի պատմությանը նվիրված մի ուշագրավ աշխատություն, 800-ի չափի նամակներ՝ ստացված տարբեր անհատներից:

Նվազ արժեք չի ներկայացնում Տիգրան Շամիրխանյանի արխիվը, որն ստացվեց 1956 թվականին: Այն պարունակում է հարյուրավոր փաստաթղթեր սովետահայ թատրոնի վերաբերյալ:

Մինչև վերջին տարիներս թանգարանի համար մեծ բաց էր արևմտահայ գրականությանն ու արվեստին վերաբերող նյութերի սակավաթիվ լինելը: Մենք ունենք ընդամենը մի քանի փոքրիկ արխիվներ (Թ. Թերզյան, Ծերենց, Մեծաբենց և այլն), որոնք նյութեր էին պարունակում հայ ժողովրդի արևմտահայ հատվածի գրականության և այլ հարցերի մասին:

Մեզ մոտ է գտնվում Հ. Պարոնյանից մեղ հասած միակ ձեռագիրը՝ «Շողոքեր» կատակերգության ինքնագիրը:

Թանգարանի աշխատողները մեծ ջանքեր են գործադրել այդ շատ կարևոր բաց լրացնելու ուղղությամբ, բայց դրանք հազվադեպ են պոսակվել հաջողությամբ: Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին աչքվել-ոչնչացվել էին Թուրքահայաստանի բազմաթիվ քաղաքներում գտնվող վանքերի, գաղթների ու եկեղեցիների արխիվները և նրանց մեջ ընդ-

գրկված ամբողջ հարստությունը՝ հազարավոր մատչաներ, հնագույն վավերագրեր, անտիկ ձեռագրեր, հայ ժողովրդի մշակութային կյանքի արտացոլող տասնյակ հազարավոր նամակներ ու գրություններ:

Թուրքիայից փախած մտավորականության մի զգալի մասը եկավ Հայաստան, մայր հայրենիք, բայց մի մասն էլ հարկադրված եղավ իր կյանքը բարձր տալ Ամերիկայում, Բալկանյան երկրներում, Եգիպտոսում, Սիրիայում, Լիբանանում ու այլուր:

Իր դարավոր մշակույթի հետ անբաժանելի կապված մեր կենսունակ ժողովուրդը հեշտությամբ չէ, որ բաժանվում է իր հոգևոր հարստությունից: Հաճախ է պատահել, որ նորմալ պայմաններում Թուրքիայից փախած մարդիկ ընդամենը մի քանի կիլոգրամ ծանրություն վերցնող ճամպուրեկների մեջ տեղ են հասկացրել իրենց սիրած գրքերին ու պապենական օրերից մնացած գրություններին, նկարներին ու նամակներին: Նրանք տարել են այդ ամենը իրենց հետ, ուր որ գնացել են: Եվ դրանք ջերմացրել են նրանց, հուսադրել, հոգեկան բավարարություն պատճառել:

Աշխարհով մեկ ցրված այդ բեկորներն են ահա, որ աստիճանաբար գալիս են մայր հայրենիք, արձանագրվում մեր թանգարանի մատչաններում, մշակվում ու խնամքով պահվում թղթապանակների մեջ: Գրեթե ամեն տարի կամ ամեն մի առիթով արտասահմանից եկած հայերը բերում են նման նյութեր, վստահ, որ իր պետականությունն ունեցող հայ ժողովրդի համար դրանք լավագույն նվերներ են:

Արտասահմանի հետ մշակութային կապը առավել ընդլայնվեց Հայրենական պատերազմից հետո, երբ Հայաստանում հիմնադրվեց Արտասահմանի հետ մշակութային կապի ընկերությունը, որը խոշոր ծառայություններ է մատուցում մի կողմից՝ զաղութահայությանը հայրենիքի հաջողություններին ծանոթացնելու, մյուս կողմից՝ Հայաստանի մշակութային տարբեր հիմնարկների ցանկությամբ արտասահմանից գեղարվեստական գրականություն, գրական առանձին փաստաթղթեր բերելու ուղղությամբ:

Այդ ընկերության ջանքերով ձեռք բերվեց բանասեր, բանահավաք, արևմտահայ թատրոնի պատմության լավագույն դիտակ ու բազմաթիվ աշխատությունների հեղինակ Սմբատ Դավթյանի հարուստ արխիվը, որ թանգարանի թատերաբաժանական բաժնում կազմելով առանձին ֆոնդ, լրացրեց մի մեծ բաց: Առանց Սմբատ Դավթյանի արխիվի նյութերի թանգարանին չէր հաջողվի իր արժանի տեղը հատկացնել արևմտահայ թատրոնին այն մշտական

ցուցահանդեսում, որը բացվեց 1957 թվականի վերջերին:

Թանգարանը արխիվային մի շարք արժեքավոր նյութեր ստացել է էջմիածնի կաթողիկոսարանի միջոցով: Այսպես, այդ ճանապարհով Լոնդոնից ստացվել են Բաֆուտ հարսի՝ Ալեքսանդրա Կորմիկի կողմից մեր թանգարանին նվեր ուղարկած իրերը (Բաֆուտ խալաթը, թամբաբուրի տուփը, գրիչը, մի քանի նկար և այլն), Կոմիտասին վերաբերող նյութեր, Սիա-մանթոյի մի շատ արժեքավոր բացիկը, Պոլսի նախկին պատրիարքական տեղապահ Գ. Ասլանյանի հարուստ գրադարանի այն մասը, (հատկապես պարբերական մամուլի հավաքածուներ), որը հայագիտական արժեք է ներկայացնում և լրացնում է Ակադեմիայի Գրականության և արվեստի թանգարանի ֆոնդը և այլն:

1957 թվականի փետրվար ամսին Արտասահմանի հետ կուլտուրական կապի հայկական ընկերության միջոցով թանգարանը Փարիզից ստացավ ականավոր գրող, բանասեր, «Անահիտ» հանդեսի երկարամյա խմբագիր Արշակ Չոպանյանի հարուստ արխիվը, բազմաթիվ մոտ հիսուն հազար միավորից և գրադարանը:

Ավելի քան կես դարի ընթացքում հավաքված այդ արխիվը պարունակում է շուրջ 30 հազար նամակ, որի կեսից ավելին հայերեն լեզվով է, իսկ մնացածը օտար լեզուներով: Եթե մինչ այդ թանգարանի ֆոնդերում միայն հատ ու կենտ նամակներ ունեինք արևմտահայ գրողներից (Ա. Արփիարյանից, Գ. Սրվանձատյանից և ուրիշներից), իսկ բազմաթիվ գրողների ձեռագրերից նմուշներ անգամ չունեինք, ապա այժմ Չոպանյանի արխիվի շնորհիվ թանգարանը հարստացավ գերազանցապես հայ ականավոր գրողների՝ Շիրվանզադեի, Պերճ Պողոսյանի, Ալեքսանդր Մատուրյանի, Հ. Թումանյանի, Նար-Դոսի, Ավետիք Իսահակյանի, Դանիել Վարուժանի, Սիամանթոյի, Գրիգոր Զոհրապի, Ռ. Զարգարյանի, Ռ. Որբերյանի, Երվանդ Օտյանի, Ա. Արփիարյանի, Մելքոն Կյուրքյանի, Տիգրան Կամսարականի, մի խոսքով Չոպանյանին ժամանակակից գրեթե բոլոր հայտնի գրողների մոտ 2000 արժեքավոր նամակներով:

Այս արխիվի անգնահատելի արժեքներից պետք է համարել Կոմիտասի, Մարտիրոս Սարգսյանի, Թ. Թորամանյանի, էզգար Շահինի և այլ արվեստագետների բազմաթիվ նամակները:

Չոպանյանը լայն կապեր է ունեցել օտարազգի, հատկապես ֆրանսիացի քաղաքական և մշակութային ընդհավառում աշխատող գործիչների հետ: Նրա արխիվում պահպանվում են նամակներ կամ բացիկներ Անատոլ Ֆրանսից,

Նկլֆոնս Դոդերից, Հ. Բարբյուսից, Ռոմեն Ռոյանից, Ֆրանց Վերֆելից, Ա. Մեյլից և ուրիշները, Այնտեղ է էմիլ Վերհաուսի առաջաբանի բնագիրը՝ գրված Չոպանյանի երկերի ժողովածուի ֆրանսերեն թարգմանության համար:

Արխիվում պահպանվել է թանկարժեք մի փաստաթուղթ, որը վերաբերում է հայ ժողովրդի պատմության ամենաողբերգական մի շրջանի՝ 1896 թվականի կոտորածներին: Դա ֆրանսերեն լեզվով գրված է ժամանակի մամուլում տպագրված ըողորի բնագիրն է, որի տակ մենք հանդիպում ենք ժամանակի քաղաքական և մշակութային ականավոր գործիչներից շատ շատերի՝ ինչպես էմիլ Զոլայի, Անատոլ Ֆրանսի, ժան Ժորեսի, Ալֆոնս Դոդերի և ուրիշների ստորագրություններին:

Չոպանյանի հարուստ արխիվում են ընդգրկված «Անահիտ» պարբերականի խմբագրության նյութերը, տպագրի և անտիպ հոդվածներ, գրություններ, ինչպես նաև նրա անձնական գրադարանի մի մասը:

Չոպանյանի այս արժեքավոր արխիվը հայրենիք ուղարկելու գործին մեծապես նպաստեց ֆրանսահայ Մշակութային ընկերությունը՝ կատարելով ջերմ հայրենասիրական մի գործ:

Նույնպիսի թանկարժեք մի նվեր թանգարանը ստացավ Կոստանդնուպոլիսից: Դա բանաստեղծ, բանասեր և բանահավաք, պատմաբանասիրական մի շարք աշխատությունների հեղինակ, հանգուցյալ Թորոս Ազատյանի հարուստ և բազմաթիվանդակ հավաքածուն է:

Երկար տարիներ կապված լինելով Պոլսի Պատրիարքարանի հետ և աշխատելով այնտեղ որպես ուսումնական խորհրդի գիվանագետի օգնական, Ազատյանը շփման մեջ է եղել վերջին քառորդ պարում Պոլսում գործող մշակութային տարբեր խավերի ու առանձին մարդկանց հետ: Երա հավաքած գրական, ազգագրական և վիճակագրական փաստաթղթերը հարուստ նյութ են պարունակում արևմտահայ գավառի հասարակական քաղաքական և մշակութային կյանքի մասին և կարող են մեծապես օժանդակել հայ ժողովրդի մոտավոր անցյալի մշակութային պատմությունն ուսումնասիրողներին:

Այս կարգի արժեքավոր նյութեր է պարունակում Թ. Ազատյանի հավաքածոյի այն մասը, որը անցյալում պատկանել է Հովհաննես Բահանա Մկրյանին: Այնտեղ մենք գտնում ենք հայ ժողովրդի արևմտահայ հատվածի վերջին երկու հարյուրամյա մշակութային պատմության նվիրված անշափ կարևոր փաստաթղթեր:

Թ. Ազատյանի տարիներ շարունակ զբաղվելով իր ծննդավայրի՝ Հայաստանի Ակն քաղաքի ժողովրդական բանահյուսության, ազ-

գագրության ու տեղագրության, վիթխարի նյութ է հավաքել այդ ուղագրավ քաղաքի ինչպես սոցիալ-տնտեսական, այնպես էլ մշակութային կյանքի վերաբերյալ: Ըստ որում Ազատյանի հավաքածոյում պահպանվում են ոչ միայն տպագրի, այլև անտիպ նյութեր, սեագրություններ:

Հավաքածոյի թանկարժեք մասն են կազմում հայերեն և հայատառ թուրքերեն ձեռագիր մատյաններ, որոնց թիվը, եթե հաշվենք նաև թերի գրքերն ու պատառիկները, կարող է հասնել մոտ հարյուր հիսունի: Ազատյանի անձնական գրադարանը պարունակում է մոտ հինգ հազար կտոր գիրք և պարբերական մամուլի տարբեր օրգանների հավաքածոներ: Այս զրքերից մոտ հազար կտոր հնատիպ և հազվագյուտ հրատարակություններ են, որոնց մեծագույն մասը պահպանում էր մեր թանգարանում: Ազատյանի գրադարանի այդ մասը կօգնի նոր ցուցահանդեսի կազմակերպմանը, նվիրված հայ գրականության զարգացմանը՝ սկզբից մինչև մեր օրերը, ցուցահանդես, որտեղ իրենց տեղն են գրավելու հնատիպ գրքերից շատ շատերը՝ հրատարակված հատկապես Ամստերդամում, Վենետիկում, Վիեննայում, Պոլսում, Կալկաթայում և այլ վայրերում մինչև 1800-ական թվականները:

Արժեքավոր են առանձնապես վերջին տասնամյակների ընթացքում Պոլսում հրատարակված օրաթերթերի, ամսագրերի և տարեցույցների հավաքածոները, որ մենք գտնում ենք Թ. Ազատյանի գրադարանում: Շնորհիվ Թ. Ազատյանի գրադարանի, այժմ մենք ունենք Կ. Պոլսում լույս տեսած «Վերջին լուր» (հետագայում «Նոր լուր») օրաթերթերի ամբողջ հավաքածուն՝ սկսած նրա հրատարակման առաջին օրերից, այսինքն 1914 թվականից, մինչև 1950-ական թվականները, ինչպես նաև մի շարք այլ պարբերականների հավաքածոները («Արևելք», «Հայ կին», «Քուլիս» և այլն) և վերջապես Պոլսի ազգային հիմնականոցի տարեցույցների ճոխ հավաքածուն՝ սկսած նրա առաջին տարվանից մինչև 1948 թվականը, քաղաքականության այն տարիների (1911—23), երբ, որքան մեզ հայտնի է, լույս չի տեսել այդ տարեգիրքը: Թ. Ազատյանի հավաքածոն Հայաստան ուղարկելու գործում հայրենասիրական մեծ եռանդ ցուցաբերեց հանգուցյալի այրին՝ տիկին Շուշանիկ Թ. Ազատյանը:

Թանգարանը ստացել է սփյուռքահայ առանձին հայրենասեր մարդկանցից ուրիշ արխիվներ ևս: Ստացված բոլոր նյութերը ենթարկվում են գիտական մշակման ու ցուցակագրման և պահպանվում են մեծագույն խնամքով:

Քանդարանի նպատակը, սակայն, միայն արխիվների հավաքումն ու պահպանումը չէ։ Նրա առաջ ծառացած հիմնական խնդիրներից մեկը պրակտիկ աչք հարուստ ժառանգությունը հայագիտությանը, հատկապես հալ գրականության ու արվեստի ուսումնասիրմանը ծառայեցնելը, ժողովրդի սեփականությունը դարձնելն է։ Այդ աշխատանքը կատարվում է երեք ուղղությամբ. ա) արխիվների օգտագործում գիտական նպատակների համար, բ) կարևոր ձեռագրերի հրատարակում և գ) ցուցադրում մշտական և ընթացիկ ցուցահանդեսներում։

Տարեց-տարի ընդարձակվում են թանգարանի սպասարկման շրջանակները։ Եթե մինչև վերջին տարիները թանգարանի գրական բաժինը տարեկան սպասարկում էր 200—300 մարդու, ապա վերջին 3—4 տարիների ընթացքում այդ թիվը հասել է 600—700-ի։

Մեր ֆոնդերի հիման վրա ծրագրվում և կենսագործվում են ականավոր գրողների երկերի դիտական հրատարակությունները, որոնք հիմնականում կատարվում են Ակադեմիայի Մ. Արեղյանի անվան գրականության ինստիտուտի, Ակադեմիայի Արվեստների պատմության և տեսության սեկտորի, Պետհրատի կողմից։ Մեր թանգարանի Երկու բաժինների արխիվային ֆոնդերից օգտվում են Ակադեմիայի հասարակական բաժանմունքի բոլոր ինստիտուտների ու սեկտորների, Պետական համալսարանի բանասիրական ու պատմական ֆակուլտետների, Պետական Մանկավարժական ինստիտուտի և այլ գիտական հիմնարկների այն բոլոր աշխատակիցներն ու ասպիրանտները, որոնք պրոպեդևտիկ և գիտական աշխատություններ հալ գրականության, հրապարակախոսության, արվեստի այս կամ այն բնագավառի մասին, կամ գիտերազգիաներ հայագիտության հետ կապված հարցերի շուրջ։ Թանգարանի իր հերթին տպագրության է պատրաստում և հրատարակում է մեր արխիվային ֆոնդերից առավել կարևոր փաստաթղթերը։ Տարիներ առաջ հրատարակվել է «Գրական ժառանգություն» Ա. հատորը, սովոր մի ժողովածու, որը պարունակում է Մ. Նալբանդյանի, Պ. Պողոջյանի, Ղ. Աղայանի, Վ. Փափազյանի մի շարք անույն երկերը։ Այժմ արդեն տպագրության համար պատրաստ են «Գրական ժառանգություն» երեք հատորները, որտեղ ընդգրկվե-

լու են Պետրոս Աղամյանի, Ալ. Մատուրյանի, Նար-Կոսի, Հովհ. Հովհաննիսյանի, Ստ. Նազարյանցի և ուրիշների բազմաթիվ անույն նամակներն ու այլ կարգի փաստաթղթեր։ Թանգարանը ծրագրել է առաջիկա չորս տարիների ընթացքում, այսինքն մինչև 1965 թ. հրատարակել «Գրական ժառանգություն» 10 սովոր հատոր, որոնցից 6-ում կգեղեցիկ մեր նշանավոր գրողների և արվեստագետների նամակները (Շիրվանզադե, Ս. Շահազիզ, Սպենդիարյան և այլն), 4-ում՝ հիշողություններ հալ գրողների, արվեստագետների մասին (ինչպես Կոմիտասի, Աղամյանի և ուրիշների)։

Տարիների ընթացքում թանգարանում կուտակված հարուստ նյութի օգտագործմամբ դեռևս 30-ական թվականների վերջերից կազմակերպվել են հոբելյանական ցուցահանդեսներ Միրզ. Նալբանդյանի, Պ. Պողոջյանի, Խ. Աբովյանի, Ղ. Աղայանի և այլ գրողների մասին։

Ականավոր արախոսուհի Սիրանուշի ծննդդյան 100-ամյակի առթիվ 1957 թվականի դեկտեմբեր ամսին թանգարանը ցուցահանդես կազմակերպեց Գ. Սունդուկյանի անվան թատրոնում, որտեղ նշվեց արախոսուհու հոբելյանը։

Սովետական Հայաստանի մայրաքաղաքը հարուստ է տեսարժան վայրերով։ Մեր հյուպարկալ Մատենադարանը, Պետական պատկերասրահը, Պատմական ու բաղարային թանգարանները ցուցադրում են մեր ժողովրդի բազմադարյան մշակութային առանձին բնագավառները։

Վաղուց անհրաժեշտություն էր դարձել հալ ժողովրդի մշակութային այնպիսի կարևոր ձյուղերի ցուցադրումը մշտական ցուցահանդեսներում, ինչպիսիք են նրա թատերական արվեստը և ղեկավարվածական հարուստ գրականությունը։

Այս կարևոր գործին է, որ ձեռնարկեց Գրականություն և արվեստի թանգարանը, ծրագրելով նախ պատրաստել թատրոնի պատմությանը նվիրված ցուցահանդեսը, ապա առաջիկա տարիներին նաև գրականության պատմությանը նվիրված ցուցահանդես։ Երեք տարվա լարված աշխատանքից հետո թանգարանի կոլեկտիվը պատվով գլուխ բերեց այդ կարևոր գործը 1957 թվականի դեկտեմբեր ամսին հրատարակությանը հանձնելով հալ թատրոնի 2000-ամյա պատմությանը նվիրված մշտական ցուցահանդեսը, որը գիտողների կողմից ջերմ ընդունվելույն արժանացավ։

Գ. ՍՏԵՓԱՆՅԱՆ